ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 177-Ա/2 **«03» փետրվարի 2023 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի N 1694-Ա/2 հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 2160-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 1-ին կայացած նիստի արձանագրությունը, ինչպես նաև ելնելով 2023 թվականի բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի փետրվարի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. փետրվարի 03 -ի
N 177 -Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	Քիմիա	23DP-1D006	Դավթյան Դավիթ Հայրապետի	Գունավոր ծխի գեներացման պիրոտեխնիկական բաղադրությունների և դրանց հիման վրա ծխագլանակների տեխնոլոգիական լուծումների մշակում	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
2	էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	23DP-2B007	Զաքարյան Տիգրան Վանիկի	Օբյեկտների ցրման արդյունավետ մակերևույթի գնահատման ծախսարդյունավետ մեթոդ	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ (ՌՖԷԻ)
3	էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	23DP-2B024	Միկիլյան Մարինե Ալեքսանդրի	Եռաչափ տարածության մեջ շարժվող օբյեկտների տեղորոշում մեքենայական ուսուցման և թվային մեթոդների ալգորիթմների հիման վրա	ՀՀ ԳԱԱ «Մեխանիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
4	Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	23DP-1B017	Սարգսյան Սևակ Սենիկի	Օդային թիրախներ խոցող ինքնավար դրոն	Հայ-ռուսական համալսարան ԲՄԿ ՊՈՒՀ
5	Նանոտեխնոլոգիա	23DP-2J034	Սիմոնյան Ավետիս Սամվելի	Ածխածնային նանոխողովակների սինթեզը, հետազոտումը և կիրառումը պաշտպանիչ հանդերձանքում	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
6	էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	23DP-2B022	Սիվոլենկո Էդուարդ Ռոբերտի	Շարժվող կենսաբանական օբյեկտից դյուրակիր ռադարներով գրանցված միկրոդոպլերյան ազդանշանների տարանջատումն ու նույնականացումը բարձր կարգի սպեկտրալ ձևափոխությունների միջոցով	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ (ՌՖԷԻ)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.
Գիտական թեմայի ֆինանսավորման համար լրացված պայմանագիրը պետք է ներբեռնել grants.scs.am համակարգի «ԵՆ 2023» մրցույթի էջից: